ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/46756-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-278-12.09.2019-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1476 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան
Հեռ. 010515686

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-278-12.09.2019-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետև՝ նախագիծ) առաջարկվում է կարգավորել տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների նախագծերի, ավագանու նիստերի օրակարգերի նախագծերի հրապարակման և համապատասխան նիստերի առցանց հեռարձակման հետ կապված հարաբերությունները, ինչի արդյունքում կբարձրանա բնակչության իրազեկվածությունը և կապահովվի շրջանառվող նախագծերի վերաբերյալ բնակչության կարծիքի դրսևորումը և առաջարկությունների ներկայացումը:

Քանի որ նախագծով առաջարկվող փոփոխությունները վերաբերում են տեղական ինքնակառավարման ոլորտում տեղեկատվության ազատությանը վերաբերող խնդիրներին, հարկ ենք համարում տեղեկացնել, որ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության գործողությունների չորրորդ ծրագրով (հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1307-Լ որոշմամբ) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ստանձնել է «Համայնքային կայքերի արդիականացում. Տեղական մակարդակում հրապարակայնության, թափանցիկության և մասնակցայնության ամրապնդում» վերտառությամբ հանձնառությունը, որի կատարման շրջանակներում նախատեսվում է քայլեր ձեռնարկել երկու ուղղությամբ՝ օրենսդրական փոփոխությունների իրականացում և համայնքային կայքերի գործառնական հնարավորությունների բարելավում:

Նախատեսվող օրենսդրական փոփոխություններով 3000 կամ ավելի բնակիչ ունեցող համայնքները կպարտավորվեն իրենց պաշտոնական համացանցային կայքերում հրապարակելու նաև՝

- համայնքում առկա կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (բյուջե, գործունեության տեսակ, հասցե, կոնտակ-

տային տվյալներ) և (կամ) դրանց համացանցային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում),

- համայնքապետարանի և դրա ենթակայությամբ գործող կառույցների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները,

- համայնքապետարանի կողմից տրված թույլտվությունների քանակի և տեսակների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը,

- համայնքում պետական կամ համայնքային միջոցներով իրականացվող շինարարությունների հետ կապված տեղեկատվությունը:

Նշենք, որ հրապարակման ենթակա վերը թվարկված տեղեկությունները նախատեսված է ներառել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ցանկում:

Համայնքային կայքերի գործառնական հնարավորությունների ընդլայնման մասով նախատեսվում է 20000 կամ ավելի բնակիչ ունեցող համայնքների ՏԻՄ-երի նորմատիվ իրավական ակտերի նախագծերի քննարկման ապահովում իրավական ակտերի նախագծերի e-draft.am միասնական կայքում: Հարկ է նշել, որ այս կապակցությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ քննարկումների արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել տեխնիկական բնույթի աշխատանքներ ձեռնարկել համայնքների համացանցային կայքերի և e-draft-ի միջև փոխգործելիության հաստատման նպատակով: Ակնկալվում է, որ նման փոխգործելիության հաստատման պարագայում, վերոնշյալ համայնքների ՏԻՄ-երն իրենց կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերն իրենց համացանցային կայքերում կտեղադրեն այն ձևաչափով, որը e-draft-ի կողմից ներկայացվում է իրավական ակտեր հրապարակող պետական մարմիններին, իսկ հաստատվելիք փոխգործելիության շնորհիվ համայնքի կայքում տեղադրվածը նույնությամբ կարտացոլվի e-draft.am կայքի՝ ՏԻՄ-երի համար նախատեսված բաժնում:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել նաև, որ՝

1) պետք է ուշադրություն դարձնել նաև անձնական տվյալների պաշտպանությանը: Այս նկատառումից ելնելով՝ նպատակահարմար ենք համարում, որպեսզի ՏԻՄ-երի կողմից հրապարակվեն միայն նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, քանզի անհատական իրավական ակտերի հրապարակումը կարող է իր հետ բերել անձնական տվյալների պաշտպանության առումով իրավունքների խախտումների,

2) բնակչության թվաքանակի ներքին շեմի սահմանումը պետք է ապահովի, որ

համայնքներն ունենան իրավական ակտերը սահմանված ձևաչափով կայքին ներկայացնելու, ինչպես նաև կայքում տեղադրվող նյութերը հետագայում սպասարկելու համապատասխան ունակություններ:

Ելնելով վերոնշյալից, Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծի՝

1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասը.

1) 8-րդ կետի «ձևաթղթերը» բառից հետո լրացնել «և տրամադրված թույլտվությունների քանակի և տեսակների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ կետեր.

«15) համայնքում առկա համայնքային կառույցների (կրթական, մշակութային և այլն) վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (բյուջե, գործունեության տեսակ, հասցե, կոնտակտային տվյալներ) և (կամ) դրանց համացանցային պաշտոնական կայքի հասցեն (առկայության դեպքում),

16) համայնքապետարանի և դրա ենթակայությամբ գործող կառույցների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները,

17) համայնքում պետական կամ համայնքային միջոցներով իրականացվող շինարարությունների հետ կապված տեղեկատվությունը,

18) համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկատվությունը».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-րդ մասով.

«8. 20000 կամ ավելի բնակիչ ունեցող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերն հրապարակվում են համայնքի համացանցային պաշտոնական կայքում, որը պետք է ապահովված լինի իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի հետ փոխգործելիությամբ:»:

2. 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում ղրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև այն

վայրերում, որոնք մատչելի են բնակավայրի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հոկտեմբերի 2019 թվականի N 1476 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-278-12.09.2019-ՏՏԳԲ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 15
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
««ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 8-րդ մասով.

«8. Տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների նախագծերի հրապարակումը իրականացվում է պետական լիազորված մարմնի կողմից «տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների նախագծերի հրապարակման միասնական կայքի» միջոցով»:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում՝ անկախ բնակչության թվաքանակից, բնակիչների համար մատչելի և տեսանելի վայրերում»:

Հոդված 3. Օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ կետի «10.000» բառը փոխարինել «3000» բառով.

Հոդված 4. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Նախատեսվող փոփոխության համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ գործնականում չկա ձևավորված համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների նախագծերի միասնական հարթակ, որը հնարավորություն կընձեռնի համայնքի բնակիչներին իրազեկվել իրենց համայնքում հանրային քննարկման դրված որոշումների նախագծերի վերաբերյալ, հետևաբար վերջիններս այդ նախագծերի վերաբերյալ կկարողանան ներկայացնել իրենց առաջարկություններն ու մեկնաբանությունները, ծանոթանալ այլ անձանց կամ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկներին, հետևյալ նախագծերի շրջանառման և ընդունման ընթացքին և այլն: ՀՀ արդարադատության նախարարության կողմից ստեղծված «Իրավական ակտերի նախագծերի հրապարակային միասնական կայքը» (օրինակ e-draft.am) կարող է համարվել նախադեպային՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով տարածքային կառավարման բնագավառի պետական լիազորված մարմնի համար սահմանել լիազորություն, որով վերջինս կստեղծի և կվարի «Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների նախագծերի հրապարակման մասին կայքը» (օրինակ legal e-draft.am):
   Ինչ վերաբերվում է կայքի ստեղծման ֆինանսական հնարավորություններին, ապա դրանք քննարկվել են մի շարք միջազգային կազմակերպությունների հետ և արժանացել հավանության:

2. Գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ ավագանու օրակարգի նախագիծը փակցվում է առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր 2000 բնակչի համար, մինչդեռ համայնքների բնակավայրերի զգալի մասի բնակչության թիվը փոքր է 2000-ից: Սույն նախագծով առաջարկվող փոփոխության նպատակն այն է, որ փոքրաթիվ բնակչություն ունեցող բնակավայրերի բնակիչները